



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 321 - Ա

02 մայիսի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի **երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի** կազմը հաստատելու մասին» N 15-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող **հանձնաժողովի** կազմը՝

- Գրիգորյան Ռաֆիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, նախագահ
- Նիկոյան Արտաշես - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ
- Պողոսյան Անուշ - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, քարտուղար
- Բաղայան Գարիկ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Գալոյան Մամիկոն - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
- Խաչատրյան Սուրիկ - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ
- Խաչատրյան Վիգեն - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ
- Գնդոյան Արտուր - ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ոստիկանության Գավառի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ /համաձայնությամբ/>>:

2. Այս որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Ռ. Գրիգորյան

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ